

Microsoft-ի Մատակարարի Վարքագծի կանոններ

Microsoft-ը ձգտում է լինել ավելին, քան պարզապես լավ ընկերություն, այն ձգտում է լինել գերազանց ընկերություն: Այդ նպատակն իրականացնելու համար մենք հավատարիմ ենք մեր առաքելությանը՝ ողջ աշխարհում օգնել անհատներին և ձեռնարկություններին՝ հասնելու արդյունավետության և հաջողության բարձրագույն մակարդակի: Մեր առաքելության իրականացումը կապված է ոչ միայն նորարարական տեխնոլոգիայի ստեղծման հետ: Այն նաև կապված է մեր կազմակերպության և ներանձնային հարաբերությունների, ձեռնարկության ներքին կառավարման և հաճախորդների, գործընկերների, պետական մարմինների, համայնքների և մատակարարների հետ մեր աշխատելաձևերի հետ:

Գործարար վարքի չափանիշների միջոցով (<http://aka.ms/microsoftethics>) Microsoft-ը հաստատել է ընկերության չափանիշները, որոնք ներառում են գործարար էթիկայի կանոններ և նորմատիվ պահանջներին համապատասխանություն: Այս չափանիշները կիրառելի են Microsoft-ի բոլոր աշխատողների, տնօրենների և պաշտոնյաների նկատմամբ: Նմանապես, Microsoft-ն ակնկալում է, որ իր մատակարարները կընդունեն բարեվարքության այս հանձնառությունը՝ ապահովելով Microsoft-ի Մատակարարի Վարքագծի կանոններին համապատասխանությունը և իրենց աշխատողների համապատասխան ուսուցումը:

ՄԱՏԱԿԱՐԱՐԻ ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Մատակարարները և նրանց աշխատողները, գործակալները և ենթակապալառուները (բոլորը միասին՝ «Մատակարարներ») պետք է հետևեն Մատակարարի սույն Վարքագծի կանոններին Microsoft-ի հետ կամ նրա անունից բիզնես գործունեություն իրականացնելիս: Մատակարարները պետք է անմիջապես տեղեկացնեն Microsoft-ի հետ հաղորդակցման համար պատասխանատու անձին (կամ Microsoft-ի ղեկավար անձնակազմի անդամին) այնպիսի իրավիճակի առկայության մասին, որը դրդում է Մատակարարին գործել սույն Վարքագծի կանոններին հակառակ: Microsoft-ի Մատակարարներից ակնկալվում է իրականացնել ինքնադիտանցում և ցույց տալ իրենց գործունեության համապատասխանությունը սույն Վարքագծի կանոններին, իսկ Microsoft-ը կարող է վերահսկել Մատակարարներին կամ զննել Մատակարարների տարածքները՝ կանոններին համապատասխանությունը հաստատելու համար: Microsoft-ը կարող է պահանջել անմիջապես հեռացնել Մատակարարի որևէ ներկայացուցչի (ներկայացուցիչների) կամ անձնակազմի անդամ(ներ)ի, որոնք գործում են օրենքներին, սույն Վարքագծի կանոններին կամ Microsoft-ի այլ քաղաքականությանը ոչ համապատասխան: Ի լրումն Microsoft-ի հետ Մատակարարի ունեցած պայմանագրերում նշված այլ պարտավորությունների, պահանջվում է նաև համապատասխանություն սույն Վարքագծի կանոններին և մասնակցություն այդ թեմայով Microsoft-ի կողմից առաջարկվող ուսուցմանը:

ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ՆՈՐՄԱՏԻՎ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

Microsoft-ի բոլոր Մատակարարները պետք է իրականացնեն իրենց բիզնես գործունեությունը գործող օրենքների և կանոնակարգերի հետ լիակատար համապատասխանությամբ՝ Microsoft-ի հետ և/կամ նրա անունից բիզնես գործունեություն իրականացնելիս և պետք է, առանց սահմանափակման.

- Առևտուր. Հետևեն առևտրի կարգավորման, ինչպես նաև արտահանման, վերաարտահանման և ներմուծման մասին բոլոր գործող օրենքներին և կանոնակարգերին:

- Հակամենաշնորհային գործունեություն. Իրականացնեն բիզնես գործունեություն հակամենաշնորհային և արդար մրցակցության այն օրենքներին լիակատար համապատասխանությամբ, որոնք գործում են իրենց բիզնես գործունեության իրականացման իրավասություններում:
- Բոյկոտներ. Չմասնակցեն Միացյալ Նահանգների (ԱՄՆ) կառավարության կողմից կամ գործող օրենսդրությամբ չթույլատրված միջազգային բոյկոտների:
- Հակակոռուպցիոն գործունեություն. Չմասնակցեն կաշառքների առաջարկման կամ որպես կաշառք ստացված գումարի մասնակի վերադարձման որևիցե գործունեության՝ պետական պաշտոնյաների կամ մասնավոր հատվածում անհատների հետ գործ ունենալիս: Microsoft-ը հանձն է առել հետևել ԱՄՆ-ի արտաքին կոռուպցիայի դեմ պայքարի օրենքով («FCPA») և այն երկրների հակակոռուպցիոն և փողերի լվացման դեմ պայքարի օրենքներով սահմանված չափանիշներին, որտեղ գործում է Microsoft-ը: Մատակարարները պետք է ապահովեն հակակոռուպցիոն և փողերի լվացման դեմ պայքարի բոլոր գործող օրենքների (ներառյալ «FCPA»-ի) պահանջներին համապատասխանությունը, ինչպես նաև հետևեն լոբբինգի, պետական պաշտոնյաներին նվերներ, վճարներ տալու և քաղաքական քարոզարշավներին նվիրատվություն կատարելու գործընթացները կարգավորող օրենքներին և այլ առնչվող կանոնակարգերին: Մատակարարները չպետք է, ուղղակիորեն կամ անուղղակիորեն, առաջարկեն կամ վճարեն արժեքավոր որևէ բան (ներառյալ ճամփորդություն, նվերներ, հյուրընկալություն և բարեգործական նվիրատվություններ) կառավարության, պետական մարմնի, քաղաքական կուսակցության, հասարակական միջազգային կազմակերպության որևէ պաշտոնյայի կամ աշխատողի կամ քաղաքական պաշտոնի հավակնող որևէ թեկնածուի, որպեսզի. (i) ոչ պատշաճ կերպով ազդեն պաշտոնյայի, աշխատողի, կամ թեկնածուի որևիցե գործողության կամ որոշման վրա՝ Microsoft-ի գործարար շահերը որևէ կերպ պաշտպանելու համար կամ (ii) որևէ այլ ոչ պատշաճ կերպով պաշտպանեն Microsoft-ի գործարար շահերը: Որպես Microsoft-ի ներկայացուցիչներ՝ Մատակարարները պետք է ապահովեն լիակատար համապատասխանություն Microsoft-ի Ներկայացուցիչների հակակոռուպցիոն քաղաքականությանը՝ <http://aka.ms/microsoftethics/representatives>:
- Հասանելիություն. Հաշմանդամություն ունեցող անձանց համար հասանելի ապրանքների և ծառայությունների ստեղծումը Microsoft-ի մշակույթի հիմնական սկզբունքներից մեկն է, որպեսզի իրականացնենք ոչ միայն մեր իրավական պարտավորությունները, այլ նաև կատարենք մոլորակի յուրաքանչյուր անձի հնարավորություններն ընդլայնելու մեր առաքելությունը: Microsoft-ի Մատակարարները պետք է.
 - Հետևեն վեբ հասանելիության միջազգային չափանիշին՝ Վեբ բովանդակության հասանելիության ուղեցույցի (WCAG) 2.0 կետի մակարդակ ԱԱ-ին վեբ կայքի ստեղծման առաջադրանքներ կատարելիս:
 - Հետևեն հասանելի ապրանքներ ստեղծելու Microsoft-ի բոլոր պահանջներին և չափանիշներին:

ԲԻԶՆԵՍ ԳՈՐԾԵԼԱԿԵՐՊԵՐ ԵՎ ԷԹԻԿԱ

Microsoft-ի Մատակարարները պետք է իրականացնեն իրենց բիզնես հարաբերությունները և գործունեությունը ազնվությամբ և պետք է, առանց սահմանափակման.

- Գործարար փաստաթղթեր. Ազնվորեն և ճշգրիտ կերպով գրանցել և զեկուցել ողջ գործարար տեղեկատվությունը և հետևել դրանց լրացման և ճշգրտության վերաբերյալ բոլոր գործող օրենքներին: Ստեղծել, պահպանել և տնօրինել գործարար փաստաթղթերը՝ բոլոր գործող իրավական և նորմատիվ պահանջներին լիակատար համապատասխանությամբ: Լինել ազնիվ, անմիջական և ճշմարիտ կարգավորող մարմինների ներկայացուցիչների և պետական պաշտոնյաների հետ քննարկումներում:

- Մամուլ. Microsoft-ի անունից շփվել մամուլի հետ միայն այն դեպքում, երբ Մատակարարն ուղղակիորեն գրավոր լիազորված է Microsoft-ի կողմից:
- Նվերներ. Խուսափել Microsoft-ի աշխատողներին նվերներ տալուց, քանի որ նույնիսկ լավ մտադրությամբ արված նվերը կարող է կաշառք հանդիսանալ որոշ հանգամանքների դեպքում կամ ստեղծել շահերի բախում: Չառաջարկել այնպիսի արժեքավոր բաներ, որոնք առաջարկողի համար օգուտ կամ առավելություն ստեղծելու կամ պահպանելու հնարավորություն են տալիս, և չառաջարկել այնպիսի բաներ, որոնք կարող են ազդել որոշման վրա, փոփոխել այն կամ պարտավորեցնել Microsoft-ի աշխատողին: Microsoft-ի աշխատողներին նվեր, հյուրասիրություն կամ զվարճանք առաջարկելիս մշտապես ցուցաբերել ողջամտություն, զգուշություն և չափավորություն: Մատակարարի կողմից տրվող ցանկացած նվեր պետք է թույլատրելի լինի Microsoft-ի աշխատողի ձեռնարկության և երկրի քաղաքականությամբ, քանի որ Microsoft-ի գործարար և տարածաշրջանային քաղաքականությամբ կարող են լիովին արգելված լինել նվերները կամ սահմանվել նվերների արժեքի առավելագույն սահմանաչափեր՝ տարբեր գումարների չափով: Ցանկացած նվեր, հյուրասիրություն կամ զվարճանք պետք է համապատասխանի գործող օրենսդրությանը, չպետք է խախտի առաջարկողի և/կամ ստացողի քաղաքականությունը տվյալ հարցի վերաբերյալ, ինչպես նաև համապատասխանի տեղական սովորույթներին և գործելակերպին: Մատակարարներին չի թույլատրվում որևէ արժեքի նվերներ առաջարկել Գլոբալ գնումների խմբի (ԳԳԽ) որևէ անդամին կամ վերջինիս ներկայացուցիչներին:
- Շահերի բախում. Խուսափել թվացյալ կամ փաստացի խախտումներից կամ շահերի բախումից: Մատակարարները չպետք է ուղղակիորեն գործարք կատարեն Microsoft-ի որևիցե աշխատողի հետ, որի կինը (ամուսինը), զուգընկերը կամ ընտանիքի այլ անդամներից մեկը կամ ազգականը նշանակալից ֆինանսական մասնակցություն ունի Մատակարարի մոտ: Մատակարարման պայմանագիրը բանակցելու կամ Մատակարարի պարտավորությունները կատարելու ընթացքում արգելվում է նաև գործարք կատարել Մատակարարի անձնակազմի անդամներից որևէ մեկի ամուսնու (կնոջ), զուգընկերոջ, ընտանիքի այլ անդամի կամ ազգականի հետ, որը հանդիսանում է Microsoft-ի աշխատող:
- Ինսայդերական առևտուր. Խուսափել ինսայդերական առևտրից՝ չգնելով կամ չվաճառելով Microsoft-ի կամ այլ ընկերության արժեթղթեր՝ Microsoft-ի կամ այլ ընկերության մասին այնպիսի տեղեկատվություն ունենալու դեպքում, որը հասանելի չէ ներդրողների համար և որը կարող է ազդեցություն ունենալ ներդրողի՝ արժեթուղթը գնելու կամ վաճառելու որոշման վրա:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾԵԼԱԿԵՐՊԵՐ ԵՎ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

Microsoft-ն ակնկալում է, որ իր Մատակարարները կկիսեն մարդու իրավունքների և աշխատավայրում հավասար պայմանների ապահովման իր հանձնառությունը: Microsoft-ի բոլոր Մատակարարները պետք է իրենց աշխատանքային գործունեությունն իրականացնեն գործող օրենքներին և կանոնակարգերին լիակատար համապատասխանությամբ և պետք է, առանց սահմանափակման.

- Համագործակցեն և նպաստեն աշխատողներին և աշխատավայրը ոտնձգությունից և անօրինական խտրականությունից զերծ պահելու Microsoft-ի հանձնառությանը: Ընդունելով և հարգելով մշակութային տարբերությունները՝ մենք պահանջում ենք, որ Մատակարարները չդրսևորեն խտրականություն աշխատանքի ընդունման, վարձատրության, ուսուցման հասանելիության, առաջխաղացման, աշխատանքից ազատման և/կամ պաշտոնաթողության հարցերում՝ ռասայական պատկանելիության, մաշկի գույնի, սեռի, ազգային ծագման, կրոնի, տարիքի, հաշմանդամության, սեռական ինքնության կամ արտահայտման, ամուսնական կարգավիճակի, հղիության, սեռական կողմնորոշման, քաղաքական պատկանելիության, արհմիության անդամակցության կամ վետերանի կարգավիճակի հատկանիշներով:

- Միայն կամավոր աշխատանքի օգտագործում. Microsoft-ի Մատակարարների կողմից պարտադրված աշխատանքի (ստրկական աշխատանքի, հարկադիր աշխատանքի կամ դատապարտյալների աշխատանքի) օգտագործումն արգելվում է: Արգելվում է նաև թրաֆիկինգի կամ ոչ կամավոր աշխատանքի որևիցե ձևին նպաստելը՝ սպառնալիքի, ուժի, խարդախ պահանջների կամ այլ հարկադրանքի միջոցով:
- Ապահովել աշխատանքին առնչվող փաստաթղթերի հասանելիությունը: Մատակարարներին արգելվում է աշխատողներից պահանջել «գրավ» ներկայացնել, պահել և չտալ աշխատողների նույնականացման կամ ներգաղթի փաստաթղթերը (ներառյալ, բայց չսահմանափակվելով, անձնագրերը կամ աշխատանքի թույլտվությունները) կամ ոչնչացնել, թաքցնել, առգրավել կամ որևիցե այլ կերպ արգելել այդ փաստաթղթերի հասանելիությունը աշխատողի համար: Աշխատողները պետք է ազատ հնարավորություն ունենան հեռանալ աշխատանքից՝ տեղական և համապետական օրենքներին կամ կանոնակարգերին համապատասխան, առանց անօրինական տուգանքի: Այն դեպքում, երբ Մատակարարը, արտադրական կամ Microsoft-ի արտադրանքի փաթեթավորման գործունեություն իրականացնելու համար, աշխատանքի է ընդունում աշխատողների, որոնք այն երկրից չեն, որտեղ իրականացվում է աշխատանքը, և որոնք ժամանել են տվյալ երկիր՝ Մատակարարի մոտ աշխատելու համար, Մատակարարը պետք է ապահովի նրանց հետադարձ փոխադրումն իրենց ծագման երկիր կամ փոխհատուցի աշխատողներին այդ ուղևորության ծախսը աշխատանքի ավարտից հետո:
- Հետևել աշխատանքային նվազագույն տարիք սահմանող բոլոր տեղական և համապետական օրենքներին և կանոնակարգերին և չօգտագործել մանկական աշխատուժ: Մատակարարները չեն կարող աշխատանքի ընդունել 15-ից ցածր, պարտադիր կրթությունն ավարտելու համար պահանջվող տարիքից ցածր կամ աշխատանքի ընդունելու համար օրենքով սահմանված նվազագույն աշխատանքային տարիքից ցածր տարիքի (կախված նրանից, թե նշված տարիքներից որն է ավելի բարձր) անձանց: Microsoft-ը միայն խրախուսում է աշխատավայրում ուսուցման օրինական ծրագրերի մշակումը՝ երիտասարդների կրթության նպատակով և չի համագործակցում այդ համակարգերը չարաշահողների հետ: 18-ից ցածր տարիքի աշխատողները չեն կարող իրականացնել վտանգավոր աշխատանք, և նրանց համար կարող է սահմանափակվել գիշերային աշխատանքը՝ կարևորելով կրթական կարիքները:
- Չկիրառել ֆիզիկական կարգապահության միջոցներ կամ բռնություն: Ֆիզիկական բռնությունը կամ կարգապահությունը, ֆիզիկական բռնության սպառնալիքը, սեռական կամ այլ ոտնձգությունը, բանավոր վիրավորանքը կամ ահաբեկման այլ ձևերն արգելված են:
- Վճարել սահմանված օրինական աշխատավարձ՝ մարդկային պայմաններում: Բոլոր աշխատողներին, նախքան աշխատանքի մեկնարկը և, անհրաժեշտության դեպքում, աշխատանքի ընթացքում պետք է տրամադրվի աշխատողի համար հասկանալի լեզվով հստակ և ըմբռնելի գրավոր տեղեկատվություն աշխատանքային պայմանների վերաբերյալ, որը ներառում է աշխատավարձին, նպաստներին, աշխատանքի տեղակայմանը, կենցաղային պայմաններին, կացության և հարակից ծախսերին, ներառյալ աշխատողից գանձվող ծախսերին, և, համապատասխան դեպքերում, աշխատանքի վտանգավոր բնույթին առնչվող հարցեր: Աշխատավարձից պահումները՝ որպես կարգապահական միջոց, չեն թույլատրվում: Չեն թույլատրվում նաև համապետական կամ տեղական օրենսդրությամբ չնախատեսված պահումներ աշխատավարձից՝ առանց համապատասխան աշխատողի հստակ գրավոր համաձայնության: Բոլոր կարգապահական միջոցները պետք է գրանցվեն: Մովորական աշխատանքային շաբաթվա համար վճարված աշխատավարձերն ու նպաստները պետք է համապատասխանեն տեղական և համապետական իրավական չափանիշներին:
- Աշխատողներին արտադրական կամ Microsoft-ի արտադրանքի փաթեթավորման գործունեություն իրականացնելու համար աշխատանքի ընդունելիս ապահովել, որ երրորդ կողմ հանդիսացող կադրային գործակալությունները, եթե այդպիսիք ներգրավվել են, համապատասխանեն Մատակարարի սույն Վարքագծի կանոնների դրույթներին ու իրավական պահանջներին և

պատասխանատու լինեն կադրային բոլոր ծախսերի և վճարների ապահովման համար: Եթե այդպիսի վճարները կատարվել են աշխատողների կողմից, ապա դրանք պետք է հետ վճարվեն աշխատողներին:

- Աշխատողներին տրամադրել ոլորտում ակնկալվող մակարդակին համարժեք նպաստներ՝ Microsoft-ի պահանջներին համապատասխան:
- Չպահանջել աշխատողներից աշխատել ավելի, քան տեղական և համապետական օրենքներով կամ կանոնակարգերով սահմանված օրական առավելագույն ժամաքանակը: Մատակարարները պետք է ապահովեն, որ արտաժամյա աշխատանքը լինի կամավոր և վճարվի տեղական և համապետական օրենքներին կամ կանոնակարգերին համապատասխան: Աշխատանքային շաբաթը չպետք է ներառի ավելի, քան շաբաթական 60 ժամ, ներառյալ արտաժամյա աշխատանքը, բացառությամբ արտակարգ իրավիճակների կամ բացառիկ դեպքերի: Աշխատողներին պետք է տրամադրվի առնվազն մեկ հանգստյան օր՝ յուրաքանչյուր 7-օրյա շաբաթվա համար:
- Պահպանել աշխատողների փաստաթղթերը տեղական և համապետական օրենքներին կամ կանոնակարգերին համապատասխան և ժամանակին տրամադրել աշխատողներին կատարվող վճարման հիմքը՝ վճարման կտրոնի կամ համանման փաստաթղթի միջոցով:
- Հարգել աշխատողների ազատ միավորման և կոլեկտիվ բանակցությունների իրավունքները՝ իրավական պահանջներին համապատասխան: Ինչպես նշվեց վերը, մենք պահանջում ենք, որ Մատակարարները չդրսևորեն խտրականություն աշխատանքի ընդունման, վարձատրության, ուսուցման հասանելիության, առաջխաղացման, աշխատանքից ազատման և/կամ պաշտոնաթողության հարցերում՝ արհմիության անդամակցության հիման վրա:

ԱՌՈՂՋՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Ակնկալվում է, որ Microsoft-ի Մատակարարները ներառեն առողջության և անվտանգության ապահովման ողջամիտ գործելակերպեր իրենց գործունեության բոլոր ասպարեզներում, և պետք է, առանց սահմանափակման.

- Ապահովեն անվտանգ և առողջ աշխատանքային միջավայր և ամբողջությամբ հետևեն անվտանգության ու առողջության մասին բոլոր օրենքներին, կանոնակարգերին և գործելակերպերին, ներառյալ աշխատանքային անվտանգության, արտակարգ իրավիճակների և պատրաստվածության, մասնագիտական վնասվածքների և հիվանդությունների, արդյունաբերական հիգիենայի, ֆիզիկապես դժվար աշխատանքի, մեքենաների անվտանգության, սանիտարական պայմանների ապահովման, սննդի և կացարանի վերաբերյալ հարցերում: Պետք է ձեռնարկվեն համարժեք քայլեր՝ նվազագույնի հասցնելու աշխատանքային միջավայրին հատուկ վտանգների պատճառները:
- Արգելել Microsoft-ին պատկանող կամ նրա կողմից վարձակալվող տարածքում անօրինական թմրանյութերի օգտագործումը, պահպանումը, տարածումը կամ վաճառքը:

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐ

Microsoft-ն ընդունում է շրջակա միջավայրի պաշտպանության իր սոցիալական պատասխանատվությունը և ակնկալում է, որ իր Մատակարարները կմիանան այդ հանձնառությանը՝ արձագանքելով կլիմայի փոփոխության մարտահրավերներին և աշխատելով շրջակա միջավայրի պաշտպանության ուղղությամբ: Որպես այդ հանձնառության մի մաս՝ Microsoft-ի բոլոր Մատակարարները պետք է, առանց սահմանափակման.

- Հետևեն վտանգավոր նյութերի, մթնոլորտ արտանետումների, թափոնների և կեղտաջրերի հեռացման (ներառյալ այդ նյութերի արտադրության, փոխադրման, պահպանման, հեռացման և շրջակա միջավայր բացթողման) վերաբերյալ բոլոր գործող բնապահպանական օրենքներին և կանոնակարգերին:
- Փորձեն նվազեցնել կամ ոչնչացնել բոլոր տեսակի թափոնները (ներառյալ ջուրը և էներգիան)՝ իրենց տարածքներում իրականացնելով պահպանման համապատասխան միջոցառումներ՝ իրենց տեխնիկական սպասարկման և արտադրական գործընթացների և նյութերի վերամշակման, կրկնակի օգտագործման կամ փոխարինման միջոցով:
- Ձեռք բերեն, պահպանեն և նորացնեն բոլոր պահանջվող բնապահպանական թույլտվություններն ու գրանցումները և հետևեն դրանց գործառնական և հաշվետվողական պահանջներին:
- Համապատասխան դեպքերում, նույնականացնեն քիմիական կամ այլ նյութերի բացթողումները, որոնք վտանգ են ներկայացնում շրջակա միջավայրի համար, և համապատասխան կերպով կառավարեն դրանք՝ նյութերի անվտանգ մշակումը, փոխադրումը, պահպանումը, օգտագործումը, վերամշակումը կամ կրկնակի օգտագործումն ու հեռացումը ապահովելու համար:
- Կատարեն բոլոր գործող օրենքների, կանոնակարգերի և հաճախորդների առկա պահանջները որոշ նյութերի արգելման կամ սահմանափակման վերաբերյալ, ներառյալ վերամշակման և հեռացման համար պիտակավորումը:

ԱԿՏԻՎՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Մտավոր սեփականության իրավունքների պաշտպանությունը կարևորագույն նշանակություն ունի ցանկացած ընկերության համար: Microsoft-ի գործունեությունը հիմնված է մտավոր սեփականության, ինչպես օրինակ՝ տեղեկատվության, գործընթացների և տեխնոլոգիաների վրա: Microsoft-ի բոլոր Մատակարարները պետք է, առանց սահմանափակման.

- Հարգեն և պաշտպանեն բոլոր կողմերի մտավոր սեփականության իրավունքները՝ օգտագործելով միայն այնպիսի տեղեկատվական տեխնոլոգիա և ծրագրակազմ, որն օրինական կերպով է ձեռք բերվել և լիցենզավորվել: Օգտագործեն ծրագրակազմ, սարքակազմ և բովանդակություն միայն իրենց համապատասխան լիցենզիաներին կամ օգտագործման պայմաններին համապատասխան:
- Պաշտպանեն և պատասխանատու կերպով օգտագործեն Microsoft-ի ֆիզիկական և մտավոր ակտիվները, ներառյալ մտավոր սեփականությունը, նյութական սեփականությունը, պաշարները, ծախսվող նյութերը և սարքավորումները՝ այդ ակտիվներն օգտագործելու համար Microsoft-ի լիազորությունն ունենալու դեպքում:
- Օգտագործեն Microsoft-ի կողմից տրամադրված տեղեկատվական տեխնոլոգիան և համակարգերը (ներառյալ էլ. փոստը) միայն Microsoft-ի կողմից լիազորված գործարար նպատակներով: Microsoft-ը խստորեն արգելում է Մատակարարներին օգտագործել Microsoft-ի կողմից տրամադրված տեխնոլոգիան և համակարգերը՝ (i) այնպիսի նյութ ստեղծելու, մատչելու, պահպանելու, տպելու, հայցելու կամ ուղարկելու համար, որն ահաբեկող է, անհանգստացնող, սպառնացող, վիրավորական, բաց սեռական բնույթի կամ այլապես անարգական կամ ոչ պատշաճ, կամ (ii) որևիցե կեղծ, նսեմացնող կամ չարամիտ հաղորդակցություններ ուղարկելու համար:
- Ապահովեն Microsoft-ի ծածկագրերը, գաղտնիությունը, անվտանգությունը և մասնավոր սեփականությունը պահպանելու բոլոր պահանջները՝ որպես Microsoft-ին ապրանքներ կամ ծառայություններ մատուցելու կամ Microsoft-ի ներքին կորպորատիվ ցանց, համակարգեր և շենքեր մուտք գործելու հնարավորություն ստանալու պայման: Microsoft-ի սեփականությունը հանդիսացող կամ վարձակալված սարքավորումներում պահպանվող կամ փոխանցվող բոլոր տվյալները համարվում են գաղտնի և հանդիսանում են Microsoft-ի սեփականությունը: Microsoft-ը կարող է դիտանցել կորպորատիվ ցանցի և բոլոր համակարգերի (ներառյալ էլ. փոստի)

օգտագործումը և կարող է ունենալ Microsoft-ի ցանցի օգտագործմամբ պահպանվող կամ փոխանցվող բոլոր տվյալների հասանելիություն:

- Պահպանեն Microsoft-ի և այլոց մտավոր սեփականության իրավունքները, ներառյալ, բայց չսահմանափակվելով, հեղինակային իրավունքները, արտոնագրերը, ապրանքանշանները և առևտրային գաղտնիքները, և կառավարեն տեխնոլոգիայի և «նոու-հաու»-ի փոխանցումն այն կերպ, որով կապահովվի մտավոր սեփականության իրավունքների պաշտպանությունը:

ԿԱՍԿԱԾԵԼԻ ՎԱՐՔԻ ՄԱՍԻՆ ԶԵԿՈՒՑՈՒՄ

Եթե ցանկանում եք զեկուցել կասկածելի վարքի կամ Մատակարարի Վարքագծի կանոնների հնարավոր խախտման մասին, ապա խրախուսում ենք ձեզ դիմել Microsoft-ի առաջնային կոնտակտային անձին՝ ձեր խնդիրը լուծելու համար: Եթե դա հնարավոր կամ նպատակահարմար չէ, ապա կապ հաստատեք Microsoft-ի հետ հետևյալ եղանակներից որևէ մեկի միջոցով.

- Հեռախոս. Microsoft-ի Գործարար վարքի գիծ՝ 1-877-320-MSFT (6738): Եթե զանգահարում եք Միացյալ Նահանգներից դուրս գտնվող տարածքից, ապա կարող եք վճարված զանգ կատարել Գործարար վարքի գծին՝ միանալով միջազգային օպերատորին և խնդրելով վճարված զանգ պատվիրել +1-470-219-7078 հեռախոսահամարին:
- Էլ. փոստ.. Եթե հանդիսանում եք Մատակարար՝ Microsoft-ի ինտրանետ մուտք գործելու հնարավորությամբ, ապա կարող եք էլ. փոստ ուղարկել Գործարար վարքի և համապատասխանության տնօրենի անունով՝ buscond@microsoft.com:
- Փոստ.. Նամակ ուղարկել Microsoft Corporation-ի իրավական և կորպորատիվ հարցերով ստորաբաժանման օրինականության վերահսկման տնօրենին՝ One Microsoft Way, Redmond, WA 98052 հասցեով:
- Ֆաքս. Ֆաքս ուղարկել Օրինականության վերահսկման տնօրենին՝ 1-425-708-7177:

Microsoft-ը, հնարավորության սահմաններում, կպահպանի գաղտնիությունը և չի հանդուրժի հատուցում կամ հաշվեհարդար որևէ անձի նկատմամբ, որը բարեխղճորեն խորհուրդ է հայցել կամ զեկուցել է կասկածելի վարքի կամ Մատակարարի Վարքագծի սույն կանոնների հնարավոր խախտման մասին: